ելեալ եկին ի գանկատ առ Վարդապետն. և յետ բանիցս նախատէ Մարտիրոս վարդապետն զոմանս յիշխանացն նոցա. և երևան ել[1]) թուղթն զոր գրեալ էին առ Աստուածատուր վարդապետն՝ վասն Մարտիրոս վարդապետին և Ա մոհուր ի վերան մեր յեկեղեցոյն և այլ ի Սուրբ Գէորգայ և այլ ի Հրեշտակապետու թէ Զայս մարդս որ ուղարկեցիր ի տեղս՝ բանի համա՞ր ուղարկեցիր թէ խռովութեան, որ զՅովանէս վարդապետն փախուց և զգանձանակն վերուց և զկաթողիկոսի անունն արգիլեց. և այլ այսպիսի բանք։ Զայս տեսեալ Մարտիրոս վարդապետին թէ տեսանէ՝ և առեալ ի ձեռացն զօրութեամբ, տան ի մեծ վարդապետն և ըսկսին աղաղակելով թէ Մեղա՞ք, զայս մի՛ տացես ի ձեռս Մարտիրոս վարդապետին եւ կամ ի ձեռս[2]) Ցարութիւն պալէ և Հաճի Իպրահիմին, թէ ոչ զմեզ կու խայտառակեն։ Եւ վարդապետն առ ի պահեստի զայն, և Մարտիրոս վարդապետն խնդրէր ի մեծէն զի տեսանիցէ զգիրն և զկնիքսն, և նա ոչ տայ։ Եւ սկսեալ անիծել զառնողսն բանին, և վերջն մեծանայր կռիւն և աղմուկն. և իմացեալ բանէս Եղիազար վարդապետն ուղարկեաց զաշակերտն իւր առ Աստուածատուր վարդապետն զի այրեսցէ զթուղթն, ոչ ումեք ցոյց[3]) տալով, և նայ այրեաց։

Կիրակի (14 Սեպտ.). Սուրբ Խաչ։ Քարոզ ասաց Եղիազար վարդապետն և ծանոյց զբանն Երուսաղէմայ թէ Ողորմութեամբն Քրիստոսի եղև. այսուհետև կու երթամ յիմ վանքս, բարով մնացէք։ Եւ մեր եկեղեցին կռվեցան ընդ վարպետն իմ Բրդի[4]) շունքն։

Բշի (15 Սեպտ.). գնացաք ի Վարդապետին քով յԱստուածածին, և անտի ի մերն։

Գշի (16 Սեպտ.). զտունն մեր չինեցաք։

1) ելն. 2) ի ձեռս ի ձեռս. 3) ցուց. 4) բրտի.